Հասարակութիւն Բուղաշէն գեղջ . . .	3
Հասարակութիւն Պալխանց գեղջ . . .	4
Հասարակութիւն Գոմ գեղջ	4
Կարապետ քահ. Դաւթեան Արակովայ գեղջ	3
Հասարակութիւն նոյն գեղջ	4
Պետրոս քահ. Կորխ գեղջ	4
Հասարակութիւն նոյն գեղջ	4
Դաւիթ քահ. Սրճայ գեղջ	4
Հասարակութիւն նոյն գեղջ	4
Վարդան քահ. Տ. Ստեփանեան Խատայ գեղջ	3
Հասարակութիւն նոյն գեղջ	4
Կարապետ քահ. Յարութ. Մաճատեայ գեղջ	4
Հասարակութիւն նոյն գեղջ	3
Հասարակութիւն Օլովէրտ գեղջ . . .	5
Յարութիւն քահ. Բղաւէթ գեղջ . . .	4
Հասարակութիւն նոյն գեղջ	4
Զաքարիայ քահ. Ապալ գեղջ	4
Հասարակութիւն նոյն գեղջ	6
Մելքոն քահ. Տէր Մկրտչեան Փոկայ գեղջ	4
Հասարակութիւն նոյն գեղջ	4
Գրիգոր քահ. Տ. Ղազարեան Գանձայ գեղջ	4
Հասարակութիւն նոյն գեղջ	7
Հասարակութիւն փոքր և մեծ Արակել գեղջ	5
Գրիգոր քահ. Տ. Գէորգեան և Ստեփաննոս քահ. Տ. Ստեփանեան Սաթղայ գեղջ .	6
Հասարակութիւն նոյն գեղջ	6
Մակար քահ. Պատասեանց Օրօճար գեղջ .	3
Հասարակութիւն նոյն գեղջ	3
Հասարակութիւն Ղաւորմայ գեղջ . . .	2
Աւետիս քահ. Տ. Յովհ. Ջիկրաշէն գեղջ	7
Հասարակութիւն նոյն գեղջ	5

(Շարունակ՚ի):

Խմբագրական Արարատ Ամսագրոյ

Ուղարկելով սորա հետ իմ արած դիտողութիւնը Յովսէփ Աւագ քահանայի Օրբելոյ աշխատասիրած «Դասատեսր եկեղեցական պատմութեան վրայ», խոնարհաբար խնդրեմ հրատարակել զայն «Արարատ» ամսագրի միջոցով։

Սիմֆեռոպոլ Ա. Վ. Մանդինեանց

29 Սեպտեմբերի 1871 մ.

Թիֆլիս։

(Ընկողմեակալ ոգւոյ սէրը պարտք կը դնէ մեր վերայ՝ յաջորդ ամսագրոյ կրօնական մէջ հրատարակել բարեկր. Մանդինեանց Աւագ Քահանայի դիտողութիւնքը)։

ՄԵԾ. ՄՈՎՍԷՍ Յ. ՂՈՒՐՂԱՆԵԱՆՑ

Խմբագրական Արարատ Ամսագրոյ։

Հոգաբարձութիւն Աստրախանայ Հայոց ծխական երկսեռ Հոգևոր Դպրոցաց շնորհունի խոնարհաբար խնդրել ի խմբագրութենէ՝ հրատարակել յընդհանուր գիտութիւն ազգայնոց զհետևեալ յօդուածն միջոցաւ Արարատ ամսագրոյ։

Հոգաբարձ՝ Ա. Գ. Գանան, Յովսէփ Բանիանեանց
Սիմէոն Պօղոսեանց։
Գրիգոր Սողոմոնեանց,
Յովհաննէս Սարգսեանց։

Ի 7 Սեպտ. 1871 մ.

Աստրախան։

Աստրախանայ հայ Մովսէս Յովսէփեան Ղուրղանեանց ի ցոյց Քրիստոնէական սիրոյ և Ազգային ջերմեռանդութեան յայտնեաց Հոգաբարձական ժողովոյ Աստրախանայ Հոգևոր երկսեռ Դպրոցաց՝ թէ ցանկայ նուիրել զդատարկ գետին երկարութեամբ և լայնութեամբ քսան ռուսաց սաժենիւ յօգուտ և ի վայելս Օրիորդական Հոգևոր Դպրոցի, զյետնամնացեալն ինքեան իբրև ժառանգի զկնի մահուան հօր իւրոյ Աստրախանայ հայ Յովսէփայ Մովսէսեան Ղուրղանեանց, և զկնի ընդունելոյ Հոգաբարձական խորհրդարանի զնորայն Ազգասիրական յայտարարութիւն, նա պարոն Մովսէսն Ղուրղանեանց ընդ գրութեան ի 31 յուլիսի տարւոյս առաջի արար պատկանաւորն մակագրութեամբ զկալուածագիր նշանակեալ ի վերանդր դատարկ գետնոյ, այնու դաշամբ՝ զի զտեղին այն չունիցի ոք իրաւունս վաճառել, այլ ի ժամուն կառուսցի անդ Օրիորդական Դպրոց ի յիշատակ բոլոր սերնդոց նորա։ Հոգաբարձութիւն Դպրոցաց մեծաւ յարգանօք ընդունելով զինդիր պարոն Ղուրղանեանցի զոյգ ընդ կալուածագրոյ նուիրեալ գետնոյ՝ կարգաւորեաց առնել զարժա-